ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հոկտեմբերի 2011 թ. **N ----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 21.07.2011 թվականի «Հայաստանի Հանրապետության և համաշխարհային բանկի զարգացման միջազգային ընկերակցության միջև 1997 թվականի սեպտեմբերին ստորագրված «Առողջապահության ֆինանսավորման բարելավում և առողջության առաջնային պահպանման զարգացում» թիվ 2979-ԱՄ, 2004 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացում» թիվ 3920-ԱՄ, 2007 թվականի մարտի 9-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացման 2-րդ ծրագիր» թիվ 4267-ԱՄ, 2006 թվականի հունիսի 7-ին ստորագրված «Թռչնագրիպին նախապատրաստվածության ծրագիր» թիվ 4178-ԱՄ վարկային համաձայնագրերի, ինչպես նաև 2007 թվականի հունիսի 8-ին ստորագրված «Թռչնագրիպին հակազդելու ծրագիր» թիվ MDTF 058076 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում իրականացված ծրագրերի համաձայն կառուցված, վերակառուցված և նորոգված շենքերի ու տարածքների հանձնում-ընդունումն ապահովող միջոցառումների մասին» հ.1023-Ն որոշման 5-րդ կետը,

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության Արտաշիսյան 46ա և Բաբաջանյան 21 հասցեներում գտնվող շենքերի հաշվեկշռային արժեքներն ավելացնել համապատասխանաբար 196232948 դրամ և 94075846 դրամ արժեքներով:

2. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 96769 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի

տեղաբաշխման միջոցով ավելացնել 290307000 դրամով՝ այն սահմանելով 380490000 դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 126830 հատ, յուրաքանչյուրը՝ 3000 դրամ անվանական արժեքով։

3. Հաստատել Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N1023-Ն որոշման 5-րդ կետի (այսուհետ՝ Որոշում) համաձայն Երևանի քաղաքապետին առաջարկվել է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) շենքի հաշվեկշռային արժեքն ավելացնել 290308794 դրամով, համապատասխանաբար ավելացնելով նաև ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

Ընկերության 11.08.2011թ. հ.4/04-285 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Համաշխարհային բանկի զարգացման միջազգային ընկերակցության կողմից շենքի վերանորոգման աշխատանքները կատարվել են Ընկերության Արտաշիսյան 46ա հասցեում գտնվող շենքի վրա 196232948 դրամի, և Բաբաջանյան 21 հասցեում գտնվող շենքի վրա՝ 94075846 դրամով, որի չափով ավելացվում է վերոհիշյալ շենքերի հաշվեկշռային արժեքները:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կազմված է ---------2011թ. և բաղկացած է 1 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ------

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

___.___ 2011թ. թիվ _____ Ա

որոշմամբ

հավելված

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
19.03.2004թ.

գրանցման թիվ 222.120.00273
վկայական 03 Ա 063913
26.05.2010թ. գրանցված
կանոնադրության
Թիվ ------ փոփոխությունը գրանցված

է ՀՀ իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի ----------

--տարածքային բաժնի կողմից

’’-----’’ -------- 2011թ.

---------- _____

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2011թ.

Ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 380 490 000 (երեք հարյուր ութսուն միլիոն չորս հարյուր իննսուն հազար) դրամ, որը կազմում է 126 830 (մեկ հարյուր քսանվեց հազար ութ հարյուր երեսուն) հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 3000 (երեք հազար) դրամ։

Բոլոր 126830 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից։

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ են»։

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 26.05.2010թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը։